Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	101401.03.7 Ադապտիվ սպորտ
Ընդհանուր նկարագրությունը	Կրթական ծրագիրը բաղկացած է հետևյալ մոդուլներից՝ հանրապետական և բուհական բաղադրիչներ, կամընտրական առարկաներ, պրակտիկաներ, գիտա-հետազոտական աշխատանք: Այն ներառում է անհրաժեշտ դասընթացներ ընդհանուր հումանիտար, սոցիալական, մանկավարժական, հոգեբանական, բժշկակենսաբանական, ֆիզիկական ռեաբիլիտացիայի և ադապտիվ սպորտի ոլորտներից, ինչպես նաև ընդգրկում է ընտրովի դասընթացներ և մասնագիտական պրակտիկա: Մագիստրանտները ուսումնառության վերջում հանդես են գալիս մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությամբ: Ուսումնառության տևողությունը 1.5 տարի է՝ 3 կիսամյակ, 1-ին և 2-րդ կիսամյակում՝ 16 շաբաթ լսարանային և 4 շաբաթ՝ ստուգարքների և քննությունների համար, իսկ 3-րդ կիսամյակում պլանավորվում և իրականացվում է 4 շաբաթ մասնագիտական պրակտիկա և մագիստրոսական թեզի պաշտպանությունը:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-ադապտիվ-հեռակա.pdf
Շնորհվող աստիճանը	Սպորտի մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Հեռակա
Ծրագրի տևողությունը	1,5 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի Ա1. Նկարագրել ադապտիվ սպորտում մարզիկների պատրաստության հիմունքները, միջոցները և մեթոդները, ներկայացնել բեռնվածության չափավորման և կարգավորման առանձնահատկությունները: Ա2. Նկարագրել մարզման գործընթացի կառուցման մոտեցումները՝ մարզաձևի, հաշմանդամության տեսակի և աստիճանի առանձնահատկությունների հաշվառմամբ:

	Ա.3. Ներկայացնել ադապտիվ սպորտում մարզիկների պատրաստության տարբեր կողմերի գնահատման մեթոդիկան: Ա4. Բնութագրել մասնագիտական գործունեության ընթացքում կիրառվող հատուկ մանկավարժական, հոգեբանական, բժշկակենսաբանական, սոցիոլոգիական ժամանակակից հետազոտական մեթոդները: Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի Բ1. Իրականացնելու ուսումնամարզական գործունեություն՝ կիրառելով ադապտիվ սպորտի համապատասխան միջոցներ, մեթոդներ, սկզբունքներ՝ հաշմանդամ մարզիկների առանձնահատկությունների հաշվառմամբ: Բ2. Վերլուծելու ադապտիվ սպորտի ոլորտում մարզման գործընթացի կառավարման, պլանավորման և կազմակերպման մոտեցումները : Բ3. Իրակացնել հաշմանդամ մարզիկների պատրաստվածության տարբեր կողմերի գնահատում: Բ4. Կատարելու գիտահետազոտական աշխատանք ադապտիվ սպորտի ոլորտում, կիրառելով մանկավարժական, հոգեբանական, բժշկակենսաբանական, սոցիոլոգիական, մաթեմատիկական վիճակագրության հետազոտական մեթոդները: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ1. Բացահայտելու և վերլուծելու մասնագիտության ոլորտի արդի հիմնախնդիրները: Գ2. Ձևավորել թիմում աշխատելու մասնագիտական հմտությունները: Գ3. Պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր: Գ4. Գնահատելու իր մասնագիտական կարիքները և ապահովելու շարունակական մասնագիտական զարգացումը: Գ5. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Աշխատաշուկան	Շրջանավարտը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել ադապտիվ/հաշմանդամային սպորտի բնագավառում որպես մասնագետ՝ պետական և մասնավոր հատվածում: